ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

31.10.2014թ.
225-ի 6

ՀՀ մշակույթի նախարար
տիկին Հասմիկ Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Պողոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Որքա՞ն է կազմել ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի կողմից գործարկվող ծառայողական բջջային հեռախոսակապի ծառայության ընդհանուր վարձը (զանգերի վարձ, կարճ հաղորդագրությունների վճար, ռոումինգ, ինտերնետ) 2014թ.-ի սեպտեմբեր ամսվա համար,
2. Որքա՞ն է կազմել ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի կողմից գործարկվող ծառայողական ֆիքսված հեռախոսակապի ծառայության ընդհանուր վարձը 2014թ.-ի սեպտեմբեր ամսվա համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան